



«Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ Կոպերնիկոս համակարգի միջոցով» (ՊՈՆՏՈՍ)

ՊՈՆՏՈՍ Հաքաթոն

Հոկտեմբերի 13, 2022

Ներածություն

Երկրի դիտարկումը (ԵԴ) օգտագործվում է բնական և մարդածին միջավայրի կարգավիճակի և փոփոխությունների մոնիթորինգի և գնահատման համար: ԵԴ-ի տվյալները կարևոր են Երկրի գործընթացների և ժամանակի ընթացքում փոփոխությունների վերաբերյալ մեր գիտելիքներն ու ըմբռնումն ուժեղացնելու, ինչպես նաև շրջակա միջավայրի մոնիթորինգին և որոշումների կայացմանն աջակցելու համար: Երկիրը 1972 թվականից ի վեր մշտապես դիտարկվում է արբանյակներով՝ ապահովելով մոլորակի կանոնավոր և բազմասպեկտրային դիտարկումներ: Մեր օրերում հետազոտողները կարողանում են հասնել հեռահար զոնդավորման տարբեր տեղեկատվության՝ տարբեր և բազմազան արբանյակների և սենսորների կողմից ձեռք բերված պատկերների տեսքով՝ տարբեր ժամանակային, տարածական և սպեկտրային լուծաչափերով:

ԵԴ տվյալների առաջատար մատակարարներից մեկը [Կոպերնիկոս համակարգն](#) է: Կոպերնիկոս-ը Եվրոպական միության Երկրի դիտարկման ծրագիր է, որը դիտարկում է մեր մոլորակը և նրա շրջակա միջավայրը: Եվրոպական հանձնաժողովը ղեկավարում է ծրագիրը:

Օգտագործելով Կոպերնիկոս համակարգի կողմից տրամադրված ԵՄ տվյալները և ծառայությունները՝ [ՊՈՆՏՈՍ ծրագիրը](#) նպատակ ունի զարգացնել անդրսահմանային համագործակցությունը լայնածավալ, ներդաշնակեցված բնապահպանական մոնիթորինգի համար Սևծովյան տարածաշրջանի երկրներում և դրանից դուրս: ՊՈՆՏՈՍ-ի ընդհանուր նպատակն է տեղեկատվությունը և գիտելիքը հասանելի դարձնել գիտնականներին, քաղաքականություն մշակողներին, քաղաքացիներին և այլ համապատասխան շահագրգիռ կողմերին և ապահովել Սևծովյան տարածաշրջանի միջավայրի վիճակի և ժամանակավոր Էվոլյուցիայի ամբողջական պատկերը: Սա ձեռք է բերվում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ Կոպերնիկոս-ի արտադրանքները ավտոմատ կերպով ստանալու, տվյալների հավաքագրման և մշակման համար, դրանք ազգային կամ տարածաշրջանային ենթակառուցվածքների հետ կապելու, և Սև ծովի ու շրջակա միջավայրի մոնիթորինգի ծառայություններ մատուցելու միջոցով:

Այդ նպատակով ծրագրի թիմի կողմից մշակվել են **ՊՈՆՏՈՍ գործառնական հարթակ**

Common borders. Common solutions.

և **առցանց ծառայություններ**, ներառյալ 1) **ՊՈՆՏՈՍ Տվյալների Խորանարդ**, 2) **ՊՈՆՏՈՍ վեբ հավելված**, և 3) **ՊՈՆՏՈՍ վեբ Աշխարհագրատեղեկատվական համակարգեր (վեբԱՏՀ)**, որոնք ազատորեն հասանելի են տեղական, ազգային և տարածաշրջանային շահագրգիռ կողմերի համար:

ՊՈՆՏՈՍ Տվյալների Խորանարդ-ը (արբանյակային տվյալներից քարտեզների հեշտ ստացում) իրականացվել է այս ծրագրի յուրաքանչյուր պիլոտային տարածքի համար արբանյակային ԵԴ տվյալների հեշտ որոնման, վերլուծության, կառավարման և վիզուալիզացման հնարավորություն ընձեռելու վերջնական օգտագործողներին: Այն նպատակ ունի ուժեղացնել ԵԴ արբանյակային տվյալների արժեքը և ազդեցությունը Սև ծովի ավազանում և ՊՈՆՏՈՍ նախագծի յուրաքանչյուր [պիլոտային տարածքում](#):

ՊՈՆՏՈՍ վեբ հավելվածը (օդային և տեղանքից ստացված տվյալների կառավարման աջակցություն) ստեղծվել է ՊՈՆՏՈՍ հարթակում ինտեգրվելու համար՝ ծրագրի շրջանակներում մշակված օդային և տեղանքից ստացված տվյալները կառավարելու և վերլուծելու համար: Վեբ հավելվածը լրացնում է ՊՈՆՏՈՍ Տվյալների Խորանարդ-ին և ՊՈՆՏՈՍ վեբԱՏՀ-ին: Վեբ հավելվածի ծառայությունները հասանելի են անգլերեն, հայերեն, հունարեն, վրացերեն և ուկրաիներեն լեզուներով:

ՊՈՆՏՈՍ վեբԱՏՀ (քարտեզներում արդեն առկա տեղեկատվության համակցություն) ծառայությունը ինտերակտիվ կերպով պատկերում է ՊՈՆՏՈՍ նախագծում հավաքված և ընդհանուր տարածական ենթակառուցվածքում կազմակերպված տարածական տվյալները: Համակարգը համատեղում է Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) սկզբունքներն ու գործիքները, և նպատակ ունի ներդաշնակեցնել Ծրագրի շրջանակներում հավաքված մեծ և բազմաչափ տվյալների բազաները: ՎեբԱՏՀ-ի հիմնական նպատակն է հետազայում բարելավել օգտատերերի փորձը օգտատերերի հասանելիության, տվյալների համախմբման և տվյալների վիզուալիզացիայի առումով:

Հաքաթոնի մարտահրավերներ

Մարտահրավերը բաղկացած է երկու մասից.

1. **Գեներացնել նոր գաղափարներ՝ օգտագործելով ՊՈՆՏՈՍ գործառնական հարթակը և օնլայն ծառայությունները/գործիքները**
2. **ՊՈՆՏՈՍ պլատֆորմի համար օգտակար հավելված (կամ առանձին լուծում/գործիք) ստեղծելու առաջարկ՝ օգտագործելով Կոպերնիկոս-ի տվյալները**

Հետաքրքրությունների հնարավոր թեմաները կապված են մարտահրավերների երկու մասերի հետ.

- Կայուն զարգացման նպատակներ
- Հողային փոփոխություններ (այն կարող է ներառել հողի ծածկույթի/հողօգտագործման տարբեր դասեր, ինչպիսիք են անտառները, մշակաբույսերը, խոտածածկ տարածքները, ջրային մակերեսները և արհեստական ծածկույթները, ինչպիսիք են ճանապարհները և շենքերը).
- Ջրի պահպանում և աղտոտում;
- Գյուղատնտեսական աշխատանք/պրակտիկա (օրինակ՝ մշակաբույսերի չափի գնահատում, հողի խոնավության մասին տեղեկատվության տրամադրում և բերքատվության կանխատեսում);

- Կլիմայի փոփոխություն
- Ձեր առաջարկած թեման

Մենթորներ

ՊՈՆՏՈՍ թիմի անդամներ

Ինչու՞ մասնակցել:

- Սովորել, թե ինչպես վարվել ԵԴ տվյալների, ՊՈՆՏՈՍ հարթակի, Կոպերնիկոս տվյալների և ծառայությունների հետ
- Ստեղծել նոր գաղափարներ, որոնք ազդեցություն կունենան մեր հասարակության վրա
- Աշխատել այլ մարդկանց հետ, ովքեր հետաքրքրված են այնպիսի թեմաներով, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, աշխարհագրությունը, մեծ տվյալները, բաց տվյալները և այլն:
- Ստանալ մրցանակներ

Օրակարգ

Թեմա	Ձեկուցող	Ժամ
Օր 1 - Յուլի 12, 2022		
Ողջույնի խոսք	Ռոզա Սեփուլեյան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	17:00 - 17:05
Հաքատոնի օրակարգի ներկայացում Թիմերի և խմբավարների (մենթորների) ներկայացում Թիմերի կազմում	Տաթևիկ Վարդանյան	17:05 - 17:30
Կոպերնիկոս համակարգի ներկայացում	Եվա Դանիելյան, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն	17:30 - 17:40
Հաքատոնի մարտահրավերների ներկայացում	Ադավնի Հարությունյան, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն	17:40 - 18:00
Թիմերի աշխատանքի մեկնարկ Ձեկույցների պատրաստում		
Օր 2 - Յուլի 13, 2022		
Ողջույնի խոսք		14:00 - 14:05
Արդյունքների ներկայացում		14:05 - 16:00
Սուրճի ընդմիջում Հաղթողների ընտրություն Ժյուրիի կողմից		16:00 - 16:30

Common borders. Common solutions.

Համապատասխանություն

- Անհատներ կամ խմբեր, որոնք կկազմեն 3-5 մասնակից ունեցող թիմեր
- Տարիքային սահմանափակում >18
- Անչափահասների մասնակցության դեպքում՝ չափահաս խմբավարի (մենթորի) ներկայությունը պարտադիր է

Պահանջներ

- Մասնակցել ՊՈՆՏՈՍ կոնֆերանսին Հոկտեմբերի 12-ին, 2022
- Առաջարկվող գաղափարը կնորկայացվի Հոկտեմբերի 13-ին, 2022 (Ժյուրին մանրամասն կքննարկի յուրաքանչյուր հայտ)
- Ամբողջական հայտերը ներառելու են հետևյալ տեղեկատվությունը՝ համապատասխանելով առաջարկված աղյուսակում:

Մաս 1: Գեներացնել նոր գաղափարներ՝ օգտագործելով ՊՈՆՏՈՍ գործառնական հարթակը և օնլայն ծառայությունները/գործիքները

- Նախապատմություն և ներածություն
- Նպատակ և հիմնական գաղափար
- Մեթոդաբանություն
- Արդյունքներ և եզրակացություն

Մաս 2: ՊՈՆՏՈՍ պլատֆորմի համար օգտակար հավելված (կամ առանձին լուծում/գործիք) ստեղծելու առաջարկ՝ օգտագործելով Կոպերնիկուս-ի տվյալները

- Նախապատմություն և ներածություն
- Նպատակ և հիմնական գաղափար
- Մեթոդաբանություն
- Արդյունքներ և եզրակացություն

Մրցանակներ

Հաղթող թիմին կտրվի հնարավորություն մասնակցելու մասնագիտական զարգացման դասընթացի, ինչպես նաև շուրջ երկու ամիս կկարողանան ունենալ մենթորներ ծրագրի հետազոտական թիմից:

Ինչպե՞ս դիմել

Գրանցում: [հղում](#)

Լոգիստիկա

Վերցրեք ձեզ հետ ձեր սեփական նոութբուքը և այլ սարքեր, որոնց վրա ցանկանում եք աշխատել, ինչպես նաև անհրաժեշտ մալուխներ, լիցքավորիչներ և այլ պարագաներ: Հասանելի կլինեն հոսանքի վարդակներ և ինտերնետ: Կմատուցվի սնունդ և ըմպելիքներ:

Ժյուրի

ՊՈՆՏՈՍ թիմ

Ջաղթողին որոշելու չափանիշներ

- **Ստեղծագործականություն.** յուրաքանչյուր զեկուցում կգնահատվի՝ ելնելով այն բանից, թե որքանով է այն ցուցադրում բեկումնային հայեցակարգ և/կամ մեթոդաբանություն: Սա կարող է լինել նոր հայեցակարգի, մեթոդաբանության կամ իրականացման միջոցների ցուցադրությամբ:
- **Ազդեցություն.** Յուրաքանչյուր ներկայացում կգնահատվի՝ հիմնվելով հասարակության վրա առաջարկվող դրական ազդեցության և նրա տնտեսական կենսունակության վրա:
- **Ամբողջականություն.** Որքանով է մոտեցումը ամբողջական և ֆունկցիոնալ արտադրանք լինելուն:
- **Օգտագործողի փորձ.** Արդյո՞ք ցուցադրված մասը հղկված է, տեսողականորեն գրավիչ, հեշտ և հաճելի օգտագործման համար:

Common borders. Common solutions.